ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-12-Ո-45
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայումս գործող դատավորների թեկնածուների ցուցակում, ըստ համապատասխան մասնագիտացման բաժինների՝ քաղաքացիական և քրեական մասնագիտացման բաժիններում թեկնածուներ չկան, իսկ վարչական մասնագիտացման բաժնում առկա է 1 թեկնածու: 2019 թվականին՝ փետրվար ամսից, և 2020 թվականին պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով դադարելու են քաղաքացիական գործեր քննող 7, քրեական գործեր քննող 7 և վարչական գործեր քննող 1 դատավորի լիազորությունները: Բացի այդ, ներկա պահին դատական համակարգում առկա է դատավորի 8 թափուր հաստիք, որից 7-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ քրեական մասնագիտացմամբ:

Վերոգրյալի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ անհրաժեշտ է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժինն արտահերթ համալրել քսաներեք (23) թեկնածուով, քրեական մասնագիտացմամբ բաժինը՝ տասնյոթ (17) թեկնածուով, իսկ վարչական մասնագիտացմամբ բաժինը՝ երկու (2) թեկնածուով՝ հիմքում ունենալով հետևյալ հաշվարկը.

- քաղաքացիական մասնագիտացման բաժին՝ քսաներեք (23) թեկնածու - (ներկայումս առկա թափուր պաշտոնների քանակը՝ 7 + 2019թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 2 + 2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 5 + 2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 2 + Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ 7 – ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը՝ 0 = 23),

- քրեական մասնագիտացման բաժին՝ տասնյոթ (17) թեկնածու - (ներկայումս առկա թափուր պաշտոնների քանակը՝ 1 + 2019թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 3 + 2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 4 + 2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 2 + Օրենքի 95-րդ հոդվածի 3-

րդ մասի պահանջը՝ 7 – ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը՝ 0 = 17),

- վարչական մասնագիտացման բաժին՝ երկու (2) թեկնածու - (ներկայումս առկա թափուր պաշտոնների քանակը՝ 0 + 2019թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 0 + 2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 1 + 2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը՝ 0 + Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ 2 – ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը՝ 1 = 2):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասը և 95-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման անհրաժեշտ թվաքանակը, համապատասխանաբար՝
   - քաղաքացիական մասնագիտացմամբ բաժին՝ **քսաներեք (23)** թեկնածու,
   - քրեական մասնագիտացմամբ բաժին՝ **տասնյոթ (17)** թեկնածու,
   - վարչական մասնագիտացմամբ բաժին՝ **երկու (2)** թեկնածու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2019 թ. փետրվարի 21
ք. Երևան